Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 16-ի N 967 - Ն որոշման

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. Հորատանցքի միջոցով ջրառ իրականացնելու նպատակով նոր ջրօգտագործման թույլտվություն ստացած ջրօգտագործողի կողմից ջրային ռեսուրսների պահպանության դրամագլխին (այսուհետ՝ դրամագլուխ) նախնական հատկացումը կատարվում է ջրօգտագործման թույլտվության ստացման օրվան հաջորդող երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:

2. Հորատանցքի միջոցով ջրառ իրականացնելու նպատակով նոր ջրօգտագործման թույլտվություն ստացած ջրօգտագործողի կողմից դրամագլխին ընթացիկ հատկացումները կատարվում են ջրօգտագործման թույլտվության տրամադրման օրվան հաջորդող տարիների նույն օրը՝ մինչև գործողության ժամկետի ավարտը:

3. Ջրօգտագործման թույլտվությամբ արդեն իսկ շահագործվող հորատանցքերի համար ջրօգտագործողի կողմից դրամագլխին նախնական հատկացումը կատարվում է սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:

4. Ջրօգտագործման թույլտվությամբ արդեն իսկ շահագործվող հորատանցքերի համար ջրօգտագործողի կողմից դրամագլխին ընթացիկ հատկացումները կատարվում են հինգ տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարվա ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի ավարտման օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ